ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» դեկտեմբերի 2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու,

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ,

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության առաջատար մասնագետ:

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

---

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.

1.1 Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված, նիստին ներկա մասնակցի՝ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցչի) առաջարկած գինն է.

Գնման առարկայի անվանումը	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ		
	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների	16 666 667	3 333 333	20 000 000

1.2 Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված, նիստին ներկա **«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի և «Յուքոմ » ՍՊԸ-ի** (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցչի) առաջարկած գները թողնվել են անփոփոխ.

2. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

-1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«Յուքոմ » ՍՊԸ-ին,**

-2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՎԵՈՆ Արմենիա » ՓԲԸ-ին,**

3. **Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների մասին.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում.

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում.

3) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է).

4) գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Արթուր Թամրազյան

Արման Հարությունյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան